

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրգի, կէս տարեկանը 6 բուրգ, Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրքով և խմբագրատան մէջ.

Գր. հասցէն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ճեզգրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ծառաների հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլը, շնորհակալութիւններ համարադրութիւնը, Կիւրեղեանի կոնցէրտը, Նամակ Պետերբուրգի, Գիւրեղեանի կոնցէրտը, Ներքին լուրերը.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը, Լուրեր Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ:

ԾԱՌԱՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ծառաների և սպասաւորների վիճակի հարցը, իսկապէս արժանի է հասարակութեան մեծ ուշադրութեան: Սակայն նա այնպէս չէ դրվել հրապարակի վրա, որ կարելի լինէր արդիւնաւէտ հետեւեալները հասնել:

Իսկ հարցը կարեւոր հարցերից մէկն է: Ծառան շատ մօտ է քաղաքացու ընտանիքին: Նա շատ անգամ կարծես կազմում է ընտանիքի մի մասը, ապրելով նրա ուրախութիւններով և վշտերով շատ անգամ անգամ ծառաներ, որոնք այնքան երկար ժամանակ մնացել են մի տան մէջ և այնքան ընտանեկան են իրանց տէրերի կազմակերպւած կեանքին, որ այլ ևս ոչ մի կերպ չեն ցանկանում հեռանալ նրանցից և մնում են մինչև խոր ծերութիւնը և մահ: Նրանց համար իրանց տէրերը նոյնքան սիրելի և մտերիմ են ինչպէս իրանց հարազատները:

Բայց դրանց դէմ ունենե՞լ ծառաներ, որոնք ոչ մի կապ չեն գտնում իրանց տէրերի հետ, որոնք մնում են մի քանի ամիս, իսկ երբեմն մի քանի շաբաթ և հեռանում: Ինչո՞ւ են հեռանում, ինչո՞ւ են փոխում իրանց պաշտօնը, արդէօք իրանք են դանդաղում իրանց պարտականութիւնները մէջ թէ ընկել են խտտաւոր, հարստահարող և կամայական տէրերի ձեռք.—այդ բոլորը հարցեր են, որ զործնական կեանքի մէջ բազմաթիւ լուծումներ են ստանում: Մենք ճանաչում ենք շատ հաւատարիմ ու անխնայ ծառաներ, բայց գիտենք, որ կան և փչացած մարդիկ, որոնք անազնի կերպով են վերաբերւում դէպի իրանց պարտականութիւնները և նայում են տէրերի վրա իբրեւ թշնամիներ, որոնց չը պէտք է խնայել:

Մեզ յայտնի են բազմաթիւ դէպքեր, թէ ինչպէս ծառաները ներգրւում են ծանր աշխատանքից, հանգստութեան պակասութիւնից, վատ սնունդից, առանձին բնակարանի, կամ նոյն իսկ հասարակ մահճակալի բացակայութիւնից: Եւ անկասկած՝ այդ անսխալութեամբ վիճակը պէտք է դառնայ հասարակական հոգաձուլութեան առարկայ: Բայց նրա լուծումը ճիշդ չէ և չէ կարող կատարվել այն ճանապարհներով, որով լուծվել են ուրիշ տեսակի աշխատաւորների հարցերը: Վերջինք մի այնպիսի բան, ինչպէս է առանձին բնակարանի պահանջը: Անկասկած՝ ոչ միայն ցանկալի, այլ անհրաժեշտ է, որ ծառան ունենայ իր համար յատուկ սենեակ: Եւ մեծ բնակարաններում այդպիսի սենեակներ գոյութիւն ունեն: Բայց շատ բնակարաններ չունեն: Բայց ժամանակ հոգս չէ տարված ծառաների համար, և դժուար է բաւականաչափ յարմարութիւն ստեղծել նրանց համար: Իսկ վրդովեցուցիչ մի հանգամանք է. սակայն նա կարծ միջոցում չէ կարող փոխվել: Եւ յամենայն դէպս այդ հարցում մեծ դեր են կատարում տնայտէրերը, որոնք և պէտք է միջոցներ ձեռք առնեն բնակարանները յարմարեցնելու նաև ծառաների համար:

Անշուշտ կարելի է մի պարտաւորութիւն դնել և քաղաքային վարչութեան վրա, որ տան յատակագիծները հաստատելու հարցում:

տեղում ժամանակ յատուկ պահանջներ դնել և ծառաների սենեակների վերաբերութեամբ:

Չը պէտք է մոռանալ, սակայն որ շատ ընտանիքներ այնքան նեղված են, այնքան քիչ եկամուտով են ապրում, որ նրանք հազիւ հազ իրանց իրանց մի կերպ տեղաւորում են վարձած փոքր և նեղ բնակարանի մէջ և անկարող են լինում առանձին յարմարութիւններ ընծայել իրանց մօտ ծառայողներին:

Առհասարակ աշխատաւորների ոչ մի դասակարգ այնքան զանազանակերպ և տարբեր եղանակներով չէ ապրում, որ քան ծառաները: Նրանց մէջ կան շատ ճշմարտներ, մարդկային կերպարանք կորցրածներ, բայց կան և բազմաթիւներ, որոնք աւելի ուժեղ և սնունդ են ստանում, աւելի լաւ բնակարաններ ունեն քան օրինակ ուսուցիչները և ինտելիգենտ պաշտօնեաները: Եթէ առաջինները կարօտութեան ճանկերում տառապում են, երկրորդները հանդիստ և ապահով վարում են իրանց կեանքը:

Ինչ ձևով կարող ենք օգնել այդ իսկապէս խեղճներին, նեղվածներին և տանջվածներին:

Ընդհանուր կանոններ ստեղծել բոլոր դէպքերի համար անկարելի է: Կարելի է մի քանի կամայականութիւնների առաջնություն, որոնք վերաբերում են ծառաներ վարձելու և արձակելու պայմաններին, հանգստութեան պահանջին՝ հասարակ և տօն օրերում:

Իսկ հարցերի մեծագոյն մասը կախված են շատ բարդ հանգամանքներից:

Գործարանական կեանքում, ուր աշխատողները մի տեղ խմբված և մի որոշ հանրային վիճակ ունեցող մարդիկ են, հարցերը վճռվում են աւելի հեշտ կերպով: Այստեղ պայմանները բոլորովին ուրիշ են: Տարբեր են աշխատանքի ներկայացուցիչները, իրանց պահանջներով, տարբեր են տէրերը, տարբեր են և կեանքի պայմաններն ու պահանջները:

Յամենայն դէպս, հարցը ինքն ըստ ինքեան կարեւոր հարց է, որով հասարակութիւնը պէտք է զբաղվի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մի անգամ էլ պէտք է կրկնենք, որ շատ գեղեցիկ միայն էր Նոր-Ջուղայում մի փոքրիկ պարբերական թերթ հրատարակելը: Այդ թերթը Վերո Ջուղայի Լրագրիչն է: Ամիսը մի անգամ է լոյս տեսնում նա, շատ փոքր դիւրով բայց, պէտք է խոստովանենք, կատարում է չափազանց աչքի ընկնող ծառայութիւն, Նոր-Ջուղայի թիւում ապրող բազմաթիւ հայ գիւղական ազգաբնակչութեան ցանկեր ու կարեւոր թարգման հանդիսանալով: Դարեւո՞ղ այդ թերթիւնը անյատեցած կորած էր և հազիւ թէ այսօրվանից մի քանի տարի առաջ շատերը պարզ հասկացողութիւն ունենային Պարսկաստանի խորքերում կորած այդ գիւղական ազգաբնակչութեան մասին: Այժմ, փոքրիկ լրագրի շնորհիւ, մենք շատ բաներ ենք տեղեկանում: Ամենից առաջ իմանում ենք այն, որ տեղեւ, խաւար ու դժբախտ է այդ գիւղական հայ աշխարհը: Դա, իհարկէ, շատ հասկանալի է: Եւ ահա հարց.—ինչ ենք աւելում այդ խեղճութեան, այդ թշուառութեան համար:

Արդեօք ինչ ենք արել մինչև այժմ մեր գիւղական ժողովրդի կրթական գործի համար: Խոսքը Պարսկա-Հնդկաստանի թիւի 90—96 հայաբնակ գիւղերի մասին է, որոնք թաղուած են խաւարի մէջ:

Այս հարցն է տալիս «Լրագրիչը» և իսկապէս պատասխանում:

Միայն ժամանակ չենք լինի եթէ ասենք որ համարեա ոչինչ:

Այնուհետև յաւիտենական անխախտ, թշուառ իրողութիւնը: Գիւղացին ինքնաբերաբար ոչինչ չէ կարող անել, իսկ ժողովրդի հասկացող մասը միայն խօսել գիտէ: Դործ չը կայ ու չը կայ:

Երեք—չորս տարի է, որ մեր թիւի գիւղերում յաշտողութիւն է ուժի վերելի տարրական դպրոցներ բանալ բարեհաջող անհատների օժանդակութեամբ: Համեմատ պահանջների հետ՝ այդ գործը չափազանց փոքր է, քանի որ ունենք 90—96 հայաբնակ գիւղեր: Սակայն որպիսի ոգևորութիւն ենք տեսնում մեր գիւղացուց մէջ և որչափ բարեւոր տարրաւարութիւններ, Հնչոյց այն միակ երեւոյթը մեզ պիտի մխթարէ, որ մեր գիւղացին թէև դուրի է գիտութեան լոյսից, բայց բաւական զօրեղ թափով արթնացել է նրա մէջ ուսում ստանալու տենչը, բազմաթիւ ցամաքներով ևս խնդրում է, նա աղետում է ամենալի կողմից, նոյն իսկ խուլ ընկած անկիւնները պահանջում են ուսումնառան, ուսուցիչ, գրէր...

Այս մի ոգևորիչ ձգտում:

Մեր խեղճ գիւղացու բողոքն է այդ՝ իր տղիւնութեան դէմ, բողոքում է նա և մեր անտարբերութեան դէմ:

Ազնիւ է այդ բողոքը:

Օգնութեան աղաթակ է, բայց ոչ յուսահատ, այլ բազմաթիւ լուսատու ձայն:

Կաշկանդութիւնն ու անտարկայաշուքիւններ իսկապէս միջավայրից այդ ևս շատ միութարակն է:

Ողջունենք այդ արթնացումը:

Դիմաւորենք անկեղծութեամբ մեր գիւղացի եղբայրների օգտակար ցանկութիւններին:

Բաւական է, 300 տարի խաւարի մէջ տանջվեցին, բայց տալով իրանց կենդանական գոյութիւնը:

Բարձրացնենք մտաւորապէս ու բարոյապէս այդ ընկած ու տրորած վիճակից:

Այս է մեր գիւղացիների աղերսանքն ու պաղատանքը:

Պիտի կատարենք արդեօք...

Անշուշտ շատ հեշտութեամբ կը կատարենք մեր այդ բարոյական պարտականութիւնը, եթէ լաւ հասկանանք մեր գիւղացիների վերոյիշեալ օգտակար ձգտումների նշանակութիւնն ու ոյժը և անկեղծ գգանք մեր ժողովրդի դարաւոր ցանքը...

Չը փախնենք մեր «անտառ ու կոպիտ» գիւղացիներից, որոնց մէջ ընտանիք են շատ բարեւոր տարաւարութիւններ ու ընդունակութիւններ:

Արթնացնենք այդ բողոքը, բաւական է որչափ սպասեցինք մեր անտարբերութեամբ: Ճանք ուսումնաւորանք ու ազգային առողջ կրթութիւն, տանք լուսաւորութեան այդ գործը ոյժերը, և մեր եղբայր—գիւղացիներին փրկած կը լինեն ներկայ ու ապագայ շատ դժբախտութիւններից և հաւուածներից...

Շահ-Աբասի գերի տարած հայ ժողովուրդը մի ժամանակ արտասուքներ էր թափում իր թողած հայրենիքի համար: Կսկիծը, սաւ, կայս, մոռացվեց: Նոր սերունդներ առաջ եկան, սովորեցին նոր հայրենիքին և մոռացան հին հայրենիքը, մոռացվեցին ամենից: Այսօր նրանք զարթնել են: Այսօր նրանց գիւղերում և դաշտներում նորից աղաղակ է բարձրացել: Աղաղակ լոյսի, ուսման համար:

Կը տանք թշուառութեան խնդրածը: Հարց է: Բայց մենք կարծում ենք որ Վերո Ջուղայի Լրագրիչը իր պարտաւորութեան կէսն է միայն կատարում: Շատ գեղեցիկ է, երբ նա այնպէս պիւրեզառութեամբ է հանդիսանում: Բայց այդքան բաւական չէ: Պէտք է տալ մանրամասն, լուրջ ուսումնասիրութիւն, պէտք է փառսերով և թանշանքով խօսել, ցոյց տալ թէ ուր ինչ է հարկաւոր, ինչ միջոցներով կարելի է իրագործել զարգացան մի մեծ ծրագիր: Դուք յանդիմանում էք անտարբերութիւնը, թուլութիւնը: Շատ ևս Բայց մի ներքին գործը պայմաններում կարող են միմեանք անկէ այնպէս, որ անտարբերութիւնը արդեւ զէմ բարձրացնել խաղաղ, հաշտ ժողովուրդը: Նա կարող է ներքին: Միջոցներ անխորտակեալ կարելի է մինչև անգամ հարազատ եղբայրներին յարուսթէ ինչպէս և ինչ չափով է հարկաւոր օգնել: Ահա այդ գէնքը պէտք է խլել անտարբերութեան ձեռքից...

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Մամուլի ընտրութեան առարկայ է դարձել ընտրողական գործի ուսումնասիրութիւնը: Ռուսաստանի ներքին նախնադիւրում, ուր գոյութիւն ունեն տեղական ինքնավարութեան հիմնարկութիւններ, մշակված են ընտրութեան եղանակներ, որոնք սակայն դեռ չեն կարող համարվել բաւարար բոլոր պահանջները: Այդ պատճառով ներկայումս վերաբնութեան է ենթարկվել ընտրողական եղանակներ ինքիքը և առաջ է մղվում ընդհանուր ձայնատուութեան աւելի արդարացի սխեմա մշակելու հարցը:

Նախ և առաջ հարց է ծագում թէ ինչպիսի ընտրողական շրջաններ պէտք է կազմվեն: Ցանկութիւն է յայտնվում, որ շրջաններից իւրաքանչիւրը պարունակէ իր մէջ ոչ պակաս, քան հարիւր հազար բնակիչ: Այնուհետև իւրաքանչիւր շրջան կը բաժանվի մասերի, որոնք պէտք է ունենան առնուազը 100 կամ 200 բնակիչ, նայած թէ որը աւելի նպաստակալար կը դառնա: Անկասկած՝ ցանկալի կը լինէր, որ ընտրողական շրջանը կարելի չափ մօտ լինէր երկրի վարչական բաժանումներին:

Կովկասի վերաբերութեամբ հարց է ծագում թէ արդեօք նրա ազգաբնակչութեան առանձնայատկութիւնները արդեւ չեն հանդիսանալ կազմելու ընտրողական շրջանները և շրջանամասերը վարչական բաժանումներին ձևով: Գուցէ Կովկասի պայմանները պահանջեն աւելի մանր շրջանամասեր ծրագրելու այն դէպքերում, երբ գիւղերը ընկած լինել հեռաւոր և խուլ անկիւններում, որովհետեւ երբ բնակչները հեռու են միմեանցից 10 վերաւից աւելի, դա կը դժուարացնէ ընտրողական գործը: Եթէ ազգաբնակչան տարրը պէտք է նշանակութիւն ունենայ ընտրութեան գործում, այն ժամանակ կարեւոր է նախօրօք տեղեկութիւն ունենալ գաւառների ազգաբնակչան կազմի մասին:

Որպէս զի ընտրողական շրջանների մասին տեղեկութիւնները լիակատար լինեն, անհրաժեշտ են ցուցումներ թէ մեր երկրի ամենափոքր բնակչական կէտեր՝ օրինակ գիւղերը ինչ մեծութիւն ունեն: Հետաքրքրական է և այն թէ որքան տարածված է զբաղմունքները թէ մայրենի և թէ պետական լիզուով:

Այդ տեղեկութիւնները կարեւոր են թէ իբրեւ վիճակագրական նիւթ ընդհանուր սկզբունքները որոշակի ձևակերպելու և թէ գործնական նպատակների ծառայելու համար:

ԶԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Մօսկվայից)

Բազում կատարված սոսկալի եղբայրաշարքի մէջ կայ մի լուսաւոր կէտ—արեւն թափեց և կողոպտեց միմիայն տակաւնը, իսկ հայ և մահմեդական ժողովուրդները ոչ միայն չը մասնակցեցին այդ զազանութեանը, այլ և ամեն կերպ աշխատեցին նրան վերջ տալ:

Մենք այդպէս էլ կարող էինք սպասել—ծանօթ լինելով Կովկասին՝ մենք ևս ուրիշ շատերի նման կասենք, որ այդ երկրի՝ տարբեր ազգութիւնների և կրօնների պատկանող ժողովուրդները մէջ ոչ մի ատեղութիւն չը կայ: Ընդհակառակը ատեղութեան փոխադէպ գոյութիւն ունի մի բարի հարեանութիւն, որ կապում է միմեանց հետ վրացուն, ուսման, մահմեդականին և հային:

Կովկասցիները մէջ եղած համբարաշխութեանը արգելք է լինում, որպէս զի կողմնակի չար գրգռումները հեշտութեամբ հասնեն որ և զգալի հետեւներ: Սակայն այդ գրգռումները որոշ պայմաններում կարող են միմեանք զէմ բարձրացնել խաղաղ, հաշտ ժողովուրդը: Նա կարող է ներքին: Միջոցներ անխորտակեալ կարելի է մինչև անգամ հարազատ եղբայրներին յարուսթէ ինչպէս և ինչ չափով է հարկաւոր օգնել: Ահա այդ գէնքը պէտք է խլել անտարբերութեան ձեռքից...

Կովկասի ժողովուրդները մէջ գոյութիւն ունեցող համբարաշխութիւնը, հակառակ տակաւն-

ուղարկված, կտրաւորուեալ են հեռախօսի ցանցը, մասնաւորապէս ըստ իր և պահանջուած երկաթէ կապարի բանալի: Գանձապահ այն- տեղ չէ լինում: Նրանք փորձում են կտրել կապարը, բայց չեն կարողանում, այնպէս որ ստիպւած հեռանում են բոլորովին դատար- կաձեռն: Այդ ամենը կատարւում է միայն մի քանի րոպէսով:

Ասիական տիգրիս հեռագրում են «ԲԵՐՆԵՐ»-ին: «Պրեստալ Բերնեյսին, որ դատի էր ենթարկ- ված երկու հոգի աւելանապատկանի կրա- կով տանջելու համար, (որոնցից մէկը մեռաւ) Տալքենտի դատարանական պալատից դա- տապարտուից 3 տարի ժամանակ արձատան- ների վաշտում մնալու»:

Թիֆլիսի սպորտիստները և օգ- նակները գործադուլ են՝ արել: Նրանց գլխաւոր պահանջներն են. օրական 12 ժամ աշխատանք, կերակրութեայ հանգիստ, հիւան- դութեան դէպքում մի ամիս ուժեղ վճարել, գոնէ մի տարի ծառայած մարդուն, տարեկան մի անգամ 15 օրվայ արձակուրդ տալ գոնէ մի տարի ծառայողին՝ առանց ուժեղ կտրելու, մարդավայել վարմունք և այլն:

Կովկասից Բոստով արտոյած մի խումբ մարդիկ (հայեր) դիմել են պատշաճաւոր իշ- խանութեան և խնդրել, որ իրանց թղթատրվի հայրենիք վերադառնալ: Այդ խնդրել, ինչպէս հաղորդում է «ДОН. Р.» լրագրերը, չէ յարգված:

Գիւղացիական խառնակութիւնների պատ- ճառով, մինչև վերջին օրերս, Թիֆլիսի, Գո- րու և Սոխախի գաւառներում փակված են եկեղեցական-ծխական 15 դպրոցներ:

«Курск. Листок»-ը հաղորդում է հետևեա- լը. «Գուրսկիում ապրիլի 2-ի գիշերը ոստիկա- նութեան նկատում է Ալիքանովի փողոցում մի ժողով, և գիշերվայ ժամը 1-ի մօտ ոստի- կանութիւնը գնում է այնտեղ: Երբ ոստիկան- ները ներս են մտնում, տանը եղածներէ մի քանիսն սկսում են կրակ բաց անել: Վերա- տրվում են պրիստաւ Բոլոգով, մի գործող և մի ստրաժնիկ: Ձերբակալել են մօտ 20 հոգի: Մուգարկութեան ժամանակ գտել են գաղտնի տպարան: Ինչպէս պարզվեց, ժողովին ներկայ են եղել յեղափոխական կոմիտէի ռազմական կազմի անդամներէ մի քանի եկեղ անձեր»:

«Прав. Вѣст.»-ում հրատարակված է. Ֆի- նանսների մինիստրի խորհրդի անդամ պե- տական խորհրդական Կասպրովը հեռացված է պաշտօնից:—Այդ առիթով «ԲԵՐՆԵՐ»-ը գրում է. սրանից 2—2½ ամիս առաջ Պետերբուր- գից անյայտացաւ այդ Կասպրովը, որի ձեռ- բերն էր երկար ժամանակ հոճձի վատութիւ- նից վնասված նահանգների համար հաց գնե- լու գործը: Նրա հեռանալուց յետոյ լուրերը պատեցին, որ մեծ գումարներ են փչացել այդ գործում: Սկզբում պարզվեց, որ կորած գու- մարը 98,000 ռ. է, իսկ յետոյ երևաց, որ 153,000 ռ. է:

Թիֆլիսի գաւառի Թալիստիկի գիւղում ապրիլի 4-ին, ասում են վրաց լրագրիւնները, շրջակայ 5 գիւղերի բնակիչներէ մի ընդհա- նուր ժողով էր կայացած, որի նպատակն էր մի ընդհանուր խնդրի ներկայացնել իրանց բոլոր կարիքների մասին: Ժողովին մասնակ- ցում էին 300—400 մարդ: Տեղեկանալով այդ մասին, վրա է հասնում պրիստաւը կազակնե- րով և չափազանց «եռանդուն» միջոցների է դիմում ժողովը ցրելու համար: Ժողովատե- րում սպանված վայր են գլորվում 3 հոգի գիւղացիներ, ասում է «Տիգր. Փուրց.» լրա- գրերը, իսկ 12 հոգի էլ վերաւորվում են: Ղը- բանցից մի քանիսն էլ բաւական ծանր ու վը- տանգաւոր վէրքեր են ստացել:

Օրեգոնի ժողովածուի մէջ տպված է. «Մի- նիստրները կռիւտեղ որոշեց. 1) վերացնել մայրօրերէն լեզուով Սուրբ Գրքերի հրատա- րակման սահմանափակող միջոցները, սակայն այն պայմանով, որ իւրաքանչիւր այդպիսի հրատարակութեան համար խնդրվի ու պիտի օրհնութիւնը, և 2) ներկայ որոշումը յանձնել Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճու- թեանը: Թագաւոր Կայսրը այդ որոշումը Բարձ- րագոյն բարեհաճել է հաստատել»:

Անիի մէջ մեկ գրում են. «Ապրիլի 6-ին, երեկոյեան ժամը 4½-ին, մօտ 10 զինված զինուորներ շրջապատեցին Արշակ Յովհան-

նիսեանցի տախտակի պահետը, կայանաւո- րեցին Արշակ Յովհաննիսեանցին և տարան ոստիկանատուն: Կայծակի արագութեամբ այդ լուրը տարածվեց այնտեղ եղած թուրքերի մէջ և ամեն մարդ պատմում էր երկուսիւնը ինչպէս ինքն էր ուղւում, բայց ականատես թուրքը պատմում էր, որ Արշակի պահես- տում գտել են 7 հրացան, 2 տոպրակ փամ- փուշտ և մի քանի տարձանակներ, բոլորը պե- տութեան զորքով: Ամբողջ գիշեր հսկելուց յետոյ առաւօտեան զինուորները գտան տախ- տակները տակից 1 հրացան 500 փամփուշտ, իսկ Արշակի ծառայողի մօտ գտել են 2 ատր- ճանակ: Արշակը հաւատացնում է, որ փամ- փուշտները իրանը չեն, իսկ մի հրացանը և 2 ատրճանակը նա պահել է իր պաշտպանու- թեան համար: Այս լուրը լսելով թուրքերը քիչ հանգստացան: Պահետը և տունը դեռ շրջապատված են զինուորներով»:

ԲԵՐՆԵՐՈՒՄԻՑ (Կարսի շրջան) մեկ գրում են. «Ապրիլի 2-ին, ս. լուսաւորչի տօնի օրը, պատարագից յետոյ՝ մեր գիւղի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց վաղամեռ Բրիտա- փոր Միքայելեանի յիշատակին: Հոգեհանգի- տից յետոյ Արսէն քահանայ Բլրցեանը դամ- բանական խօսեց գրուատելով Բրիտափորի հասարակական գործունէութիւնը: Եկեղեցում ասեղ ձգելու տեղ չը կար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐԶԸ

Որքեղ Բոժիսլովսկի Կալուգին: Որքեղ է ներկայումս գտնվում ծովապետ Բոժիսլո- վսկի Կալուգին—մինչև այժմ ճշգրտեց յայտնի չէ: Եսպոնական տեղեկութիւնները հաւատացնում են, որ նա արդէն մի քանի օր գտնվում է Կարսի մօտ ծովածոցում, որը չէզոքութեան խախտումն է Ֆրանսիայի կող- մից, որին Եսպոնիան, իր կողմից, սպառնում է պատասխանել չէզոքութեան խախտ- մամբ, այսինքն յարձակում գործելով ռուսա- կան նաւատորմի վրայ, չը նայելով, որ նա գտնվում է չէզոք ջրերում: Կարսեան ծո- վածոցը գտնվում է Պարթիան հրուանդանից դէպի հիւսիս, Անտաի հարաւային ափի վրա, ենթադրվում է, որ Բոժիսլովսկի Կալու- գին այդտեղ վերցնում է ածուխի և մթերք- ների պաշար: Գոնէ այդպէս էր գերմանական «Prinz Heinrich» շոգեհանգի կապիտանի կար- ծիքը, որը տեսել է այդ ծովածոցում ապրիլի 1-ին ցերեկով 18 ուսական նաւեր: Կար- ծում են, որ ծովապետ Բոժիսլովսկին կը սպասէ այստեղ ծովապետ Նեբոգասովի 3-դ էսկադրային, որը չէ կարող հասնել մինչև Պարթիան հրուանդանը մայիսի 1-ից առաջ (ն. տ.): Մինչև անգամ կարծիք կայ, որ Բոժիսլովսկին կտեւ չի ընդունի և յարձա- կում չի գործի, մինչև որ 4-դ բալտական էսկադրան չը գայ, որը Սուէցի ջրանցքով անցնելու է ոչ վաղ, քան օգոստոսի սկզբին: Այդ 4-դ էսկադրան, «Echo de Paris» լրա- գրի խօսքով,—բաղկացած է դեռ կատարե- լապէս չաւարտված երեք զրահակներէրից, երկու կրէյսերներէրից, 12 հատ ականերից և հակաականերից ծովապետ Վեստօլի հրա- մանատարութեամբ:

Կիւսկի օրվանից, ապրիլի 3-ին Տօկիօում տեղեկութիւններ էին ստացված, որ ռուսա- կան նաւերը նկատվել են արդէն Հօնգկոնգի բարձունքի վրա: Մինչև անգամ 5 ամիսատար նաւեր խաբիսի ունէին գցած Հօնգկոնգից 5 մղոն հեռավորութեան վրա գտնվող կղզու մօտ: Այդ բոլոր գտն գտն լուրերից այն եզրակացութեան կարելի է գալ, որ ռուսա- կան նաւատորմը գնում է Կարսեան ծո- վածոցը: Ղէպի Ֆորմոզա, բայց, ըստ երե-ւոյթի, ոչ ամբողջ, որովհետև նաւեր երե-ւում են զանազան տեղերում: Օրինակ, ուր- բաթ, ուր երեկոյեան «North Anglia» շոգե- նաւը տեսել է Բօմբէյական ժայռի մօտ կրէյ- սերներ մի գործող նաւախումբ, որոնք արա- գութեամբ գնում էին հարաւային ուղղու- թեամբ: սակայն նա չը կարողացաւ որոշել թէ զրանք արդեօք ռուսական նաւեր էին, թէ հապօնական: Բօմբէյական բարաժայրը պատ- կանում է Պարացիկ կղզիներին և գետեղ- ված է Տուրան հրուանդանի բարձունքի վրա Կոխիսիսի ափին: Հետեւաբար, «North Anglia» նաւը կարող էր միայն ռուսական նա-ւեր տեսնել, որովհետև այդպէս պէտք էր ենթադրել, որ նախապէս ընդհարումն է եղել Հօնգկոնգի մօտ տեսնված ռուսական էսկա-դրայի հետ կամ թէ չէ Հօնգկոնգի մօտ տեսն-

ված նաւերը պատկանում էին ոչ թէ ռուս- ներին, այլ հապօնացիներին, և գնում էին դէպի հարաւ: Բոժիսլովսկի վրա յարձակ- վելու համար Պարացիկ կղզիներին մօտ: (Հօ .)

ԼՈՒՐԵՐ ՊԱՐՏԻԱՍՏԱՆԻՑ (Ընդ Ջուզաի Լրագրի-ից)

Համադարձից մեկ գրում են. «Այստեղ եկել են բաւական թուով դարբարացի հայեր, ռուս- ներ, յոյներ, որոնք մտադիր են բնակութիւն հաստատել: Դադուին-Համադան ճանապարհը կը վերջանայ, ինչպէս ասում են ինժեներնե-րը, մայրիսին կամ յունիսին: Արդէն ամեն բան պատրաստ է. այս ճանապարհի վրա եր-թեկութեան համար պիտի գործածվեն օթօ-մօրիներ: Վերջացնելուց յետոյ պիտի ձեռ- նարկեն այստեղից Բիրմանյան ճանապարհը բաց անելու, եթէ փող լինի: Այժմ Բիրմանյա-նում հինգ հայ ընտանիք կայ»:

Գարահիսարցի յոյն Էմիսիմի Պալլիլի Էմի-միլիս մի տուն է գնել 400 թումանով և նուե-րել հայոց դպրոցին՝ հայաստանի պ. Հայ-կազն Գայումճեանի յորդորմամբ: Շնորհակա-լութեան արժանի են: Համադանի «բարհի-գի» հայ ջոջերը՝ եթէ օտարազգիներէր չը բարի օրինակ չեն ցանկանում վերցնել ազ-գային գործերի վերաբերմամբ, գոնէ ինտրիգ-ներով չը զբաղվեն և հակազգային ճանապար-հով չը գնան:

Փետրվարի 5-ին Ջուզայի Ազգային Կենտ-րօնական դպրոցի դահլիճում ուսուցչական խումբը ներկայացրեց Գ. Սուհուրկեանի «Պե-պօն» գրական լեզուով: Անցաւ աշուղ: Գիթօի դերում լաւ էր Ռ. Բալբերունին: Եկամուտը դպրոցնեւի օգտին էր:

Նամակեք գիւղից վերադարձաւ Ջուզա Փե-րիայի և Զարմահաի հոգեւոր հովիւ Տ. Եզնիկ վարդապետը, որից տեղեկանում ենք, որ Փե-րիա գաւառի հայ գիւղացիները յօգուտ Հա-յաստանի սովետներին*) նուրբել են մօտ 1200 թուման: Զափազանք միութեական է, որ մեր գիւղացիները քրտով և անկեղծ մասնակցել են՝ ազգային դժբախտութիւնը թեթեւացնելու, մեր թշուառ սովետներին ցաւերը մասամբ բուժելու համար: Այս անգամ քաղաքացիները թող օրինակ վերցնեն այն գիւղացիներից, ո-րոնց սովոր են մի կարգ մարդիկ մշտն ար-համարանքով նայել: Յուսալի է, որ միւս գա-ւառների հայ գիւղացիներն ևս օրինակ կը վերցնեն Փերիայի հայերի այս բարի գործից:

Դադուինից մեկ գրում են, որ այնտեղ հայ հասարակութիւնից հաւաքվել է մինչև այժմ 200 թումանից անց յօգուտ սովետներին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԲՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ 13 ապրիլի

ՀՈՄԻ: Կրէսէի հարցի առիթով եղած խոր-հրդակցութեան հետեւանք եղաւ իրերի եղած դրութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը: Պետութիւնների ներկայացուցիչներն անժա-մանակ են համարում Կրէսէի միացումը Յու-նաստանի հետ և որոշեցին այդ մասին հա-ղորդել միւս պետութիւններին, արքայադէր Դէօրգիին և ժամանակաւոր կառավարութիւնը: ԽՐԻՍՏԻԱՆԻՆ: Թագաժառանգ խնամակալի առաջարկին՝—վերանորոգել միութիւնը կամ ունիան, նորվեգիական կառավարութիւնը պա-տասխանեց, որ բանակցութիւնների չէ կարող մտնել, քանի դեռ չեն ներմուծված նորվեգիա-կան հիւպատոսութիւնները: Մտօրինգն այդ առիթով կը նշանակէ մի կօմիտէ, որն իր ծրագիրը կը ներկայացնէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պրուսական Իրենա իշխա-նուհին մեկնեց արտասահման: Նրան ուղեկ-ցեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրու-հին և Մեծ Իշխաններն ու Իշխանուհիները:

ՄԻՆՍԿ, 13 ապրիլի: Դուռնայի ընտրած պատ-գամաւորութիւնը խօսակցութիւն ունեցաւ նահանգապետի հետ ազգաբնակչութեան հան-գատացնելու համար միջոցներ՝ ձեռք առնելու մասին: Նահանգապետը գտնում է, որ ան-կարգութիւնների մասին լուրերն անհիմն են և ապահովացրեց, որ միջոցներ ձեռք-կառնէ անկարգութիւններն անյապաղ զսպելու հա-մար:

ԿԱՉԱՆ, 13 ապրիլի: «Вост. Лист.»-ը նկա-տում է, որ բարձրագոյն դպրոցներում զբաղ-մունքներն ընդհատված լինելու պատճառով,

*) Սուրբ Թիւրքաց Հայաստանի մասին է:

ուսանողները մեկնում են արտասահման, այն-տեղ դասախօսութիւններ լսելու գարնան ե-ռամեակին:

ՕՐԵՍՏՈ, 13 ապրիլի: Նաւերի նաւատու-նիքի դժգոհութիւնները նաւատերերի դէմ վարձերն աւելացնելու մասին—սուր կերպա-րանք ստացան: Ընկերութիւնները նախա-պատվում են Խրիսի և արտասահմանեան գծի նաւերը չուղարկել, քան զիջել այդ պա-հանջներին: Անկարգութիւններ չը կան: Նի-կօլանկիսի և Ներսոնի հետ հաղորդակցու-թիւնը կանօնաւոր է:

ՐՕՍՏՈՎ, ԴՕՆԻ վրա, 13 ապրիլի: Տեղեկա-կան ընկերութեան Դօնի բաժնի ժողովում հարց է յարուցված բոլոր տեսակի ինժեներ-ներէր կազմել մի դաշնակցութիւն: Մեծա-մասնութիւնը ցանկութիւն յայտնեց միանալու այդ դաշնակցութեանը:

ՄՕՍԿՎԱ: Կայացաւ հացթուխ դրամաթե-րերի խորհրդակցութիւն: Ներկայ էին 105 տէրեր: Ընտրված է յանձնաժողով վճելու տօն օրերի հանգստութեան և բանւորների ու տէրերի յարաբերութիւնները կանօնաւորելու հարցերը: Վճված է սև ու թթու հացի պու-ղը 80 ից բարձրացնել 90 կօպէկի:

ՐԻԳԱ, 13 ապրիլի: «Рижс. В.»-ը հաղոր-դում է, որ գիւղացիական գործերի մի քանի կօմիտաների գրգռչ վարմունքի մասին տա-րածված լուրերը դէպի հողատէր գերմանա-ցիները և դէպի գիւղացիական խառնակութիւն-ների զսպումը,—անհիմն են: Նմանապէս և չափազանցած են Պրիբալտեան երկրում եղած շարժումները:

ՎԻԷՆԱ, 13 ապրիլի: Աւստրիական և ի-տալական մինիստրների Վէնէցիայում իրար հանդիպելու ժամանակ ներկայ են լինելու Վիեննայի իտալական դեսպան Ավալան և Հոսիի աւստրիական դեսպան Լիւստովը:

14 ապրիլի

ՏՕԿԻՕ, 13 ապրիլի: Եսպոնական զօրամա-սի վրա ապրիլի 11-ին Կաիւանի մօտ գրոհ տուին ռուսները, բաղկացած 5 բատալիօնից, 16 էսկադրօնից և մի բատալէայից: Ռուսնե-րը յետ մղեցին հապօնական հեծելազօր: Ես-պոնացիներն սկսեցին յարձակում և ստիպե-ցին ռուսներին յետ քաշվել դէպի հիւսիս: Եսպոնացիները կորցրին 38 մարդ—Ռուսա-կան մի զօրամաս 6 բատալիօնից և 16 էս-կադրօնից յարձակվեց հապօնական զօրամասի վրա Չալտուֆուի մօտ, իսկ ռուսական մի ուրիշ զօրամաս՝ 12 էսկադրօնից և մի բատա-լէայից բաղկացած, յարձակվեց Օհաուտցիի վրա: Երկու յարձակումներն էլ յետ են մղված:

ԱՅԷԷԲ, 13 ապրիլի: Կրէտական պարա-մէնտը վճռեց պնդել կղզու միացման հարցը վրա Յունաստանի հետ: Պարլամենտի պա-տուիրակների և զինված ապստամբների բա-նակցութիւնները համաձայնութեան բերին նրանց:

ԼՕՆԴՕՆ, 13 ապրիլի: «Թայմս» թղթակիցը Տանթէրից հաղորդում է, որ այնտեղի գերմա-նական դեսպանը Նոյեմբերի սկզբին Ֆրան-սիական դեսպանի ուղարկութիւնը հրաւիրեց այն բանի վրա, որ Գերմանիան պաշտօնա-կան ազդեարարութիւն չէ ստացել Անգլօ-Ֆրան-սիական համաձայնութեան մասին, և այդ պատճառով էլ անգլիական կը տայ նա այդ բանն իր ապագայ քաղաքականութեան մէջ: Ֆրանսիական ներկայացուցիչը պատասխան չը տուեց, թէ և գերմանական դեսպանը յաճախ նկատում էր, որ Գերմանիան կը պնդէ իր տե-սակէտը: Այդ պատճառով մինիստր Բուլլէի նկատողութիւնը սխալ է, որ իր թէ Գերմա-նական թաղաքականութեան պատճառով ե-ղաւ Մուկէլէնի կտրու:—«Լոյդէ» լրաւոր գրա-սանեակից ստացված տեղեկութիւնների հա-մաձայն, երեւց, որ անգլիական «Կալուս» շոգեհանգի տեսակ երկու զրահակները և եր-կու կրէյսերները Լիւնտրազ կղզու մօտերը, Կապսօնի ծոցում, ռուսական մարտանաւեր չէին, այլ անգլիական:

Կ. ՊՕԼԻՍ, 13 ապրիլի: Տեղեկութիւն է ստացվել, որ Սալօնիկ է բերված մեծ քանա-կութեամբ վառօք և ռուսը: Ոստիկանութիւնը յայտնագործել է, որ բոլոր պատասխանները Մակեդօնիայի ազգաբնակչութեան ուղղած կո-չեր են տարածում, որով յայտնում են շուտով լինելիք ապստամբութեան մասին: Մատնա-ցոյց են անում, որ բոլորական կառավարու-թիւնը ապստամբներին իսկական օժանդո-կութիւն ցոյց էր տալ, կանգ չառնելով նոյն իսկ պատերազմ հրատարակելու առաջ, որ կառավարութիւնը պատրաստ է պատերազմ սկսելու և որ թիւրքերը կը յաղթվեն, որով-հետեւ թիւրքական զօրքերի զօրաշարժը կը

Электротечатня типографскаго Т-ва „Гермесъ“. Мад. ул. № 15.

Ղազարի—հայ և թուրք հասարակութիւնից 2. քն. Ապրէստանի հանգանակած 91 ր. 76 կ. որից 25 ր. Չխար գիւղի հրդէհի զփախուցածները համար նուիրատուներն են՝

Բուլթաթեղի—Ս. Առաքելեանց, Յ. Մ. Արի-Ջափարով 3-ական ր. Ա. Թումանյանեանց, Յ. Տէր-Բարայէլեանց, Մ. Աղաժառանգեանց, Ա. Յակոբեանց, Ա. Գրիգորեանց, Հ. Հաբիբ Ավուլլայով, Ն. Էրզրով, Մաշ. Աբ. Ավուլլայով, Ա. Սարգսեանց, Մ. Բաղդասարեանց, Ս. Բահրամով, Հ. Ալ. Հ. Ալլահվերդի 2-ական ր. Յ. Չ. Սաղաթարով 1 ր. 50 կ. Հաշի Իբրահիմ 1 ր. 35 կ. Տողերիս գրողը, Ա. Ստանիսլաս, Ն. Մամեանց, Մ. Հէջուբեանց, Ն. Մուրադեանց, Ա. Տէր-Եղիազարեանց, Ռմ. Գ. Իսախանց, Ս. Առաքելեանց, Ն. Մելիքեանց, Շ. Ասլանով, Մ. Դովմեանց, Կ. Տէր-Յարութիւնեանց, Լ. Մելիքեանց, Հ. Դասմ-ժամ-Թաղի-օղլի, Ս. Սաչատրեանց, Մ. Ուս. ք. Հուսէին օղլի, Հ. Մեհար ք. Սոուն զոգի օղլի, Պ. Մովսէսեանց, Հ. Ավ. Սաղիսով, Մ. Էրիքեանց, Հ. Ալ. ք. Մամադ-օղլի, Մ. Շահումեանց, Ս. Ամիրով, Ն. Պոպ-Երիտ-լարին, Պ. Ալլահվերդով, Ալի Հաշիե, Մ. Մահումալով, Կ. Վարդապարով. Ա. ք. Սալի-օղլի, Մ. Մելքումով, 1-ական ր. Ռմ. Յ. Դաւթեանց, Ս. Նալբեանց, Մ. Տէր-Իսրայէլեանց, Մ. Աբբ. ալի-ալիզով, Գ. Տէր-Միքիթարեանց, Հ. Լալթալով, Մ. Չ. Աբրահամով, Յ. Թաթևեանց, Ս. Յարութիւնեանց, Ա. Տէր-Յակոբեանց, Ս. Շահադեանց, Յ. Գրիգորեանց, Ալ. Դուլաով, Աղ. Դուլաով, Մ. Սմ. Համիդով, Ա. Ավուլլայով, Մ. Ալ. Արաքելեանց, Մ. Մանուկ-օղլի, Ս. Տէր-Միքիթեանց, Լ. Աթաբեկով, Մ. Արարով, Ռ. Ալի-օղլի, Չ. Բ. Համիդ-Բէգով, Հուսէին Ալի, Լ. Դեմիտեան, 50-ական կ. Գ. Մարկոսեանց, Մ. Հուսէին, Մ. Հ. Սոուն Գուլիով, Գ. Դովմեանց 30-ական կ. Ն. Սարգիսով, Յ. Աբրահամով, Ստեփանեանց, Ս. Մելքումով, Գ. Ամիրջանով, Մ. Գ. Ասկեար-օղլի, Սոուն Աղա, Հ. ա. Հասան-օղլի, Փ. Քեա-րիմով, Ա. Կափարով, Հ. ա. Սալիով, Մ. Մ. Աղիմով, Մ. Մախմուդով, Ն. Մ. Գուլի-օղլի, Մ. Գասուկով, Մ. Հ. Ալի-օղլի, Մ. Բալանթարով, Հ. Մելքումով, 25-ական կ. Ա. Սալապով, Գ. Պողոսեանց, Ս. Մու-հալեանց, Ա. Փրքուզադով, Մ. Ծա-տուրեանց, Մ. Ավետով, Ալի Ալադով, Մ. Ալ. Շաղի-օղլի, Հաշի Թասով, Մ. Հ. Առաքելայ, Գ. Շահնազարեանց, Ա. Ալ-լալիզով, Լ. Աւալեանց, 20-ական կ. Ա. Վարդապարով 15 կ. 4 հոգի 10-ական կ. Բարախանարա գիւղի Կոմիտաս քն. Սիմէ-օ-նեանցի հանգանակած 40 ր. 15 կ.:

Առանց ազգութեան խորութեան Ներս. զարոյցի սպասաւորներէից 2 ր. Տիգրան 1 ր. Սիմէօն, Յովսէփ, Մմբատ, Գասպար, Յովսէփ 50-ական կ. ընդամենը 5 ր. 50 կ.

Տաղանդոտի—հայ հասարակութիւնից Մ. Տէր-Բաղդասարեանի միջոցով 28 ր. որ նուիրել են՝

Վարդան Յովհաննիսեան, Ս. Օտապա-շեան 10-ական ր. Ա. Խապէիկեան 3 ր. օր. Վ. Յովհաննիսեան, Պ. Իւրեան, Մ. Պէշտաւեան, Տաշիկեան, Ա. Նազարեան 1-ական ր.:

Երեւանի—կոմիտասեանցի հայ ծառայող-ներէից Գ. Սմբատեանի միջոցով 10 ր. 50 կ. որոնք են՝

Գ. Սմբատեանց 3 ր. Մ. Չաքարեանց 1 ր. 50 կ. Ա. Տէր-Աւետեանց 1 ր. 40 կ. Գ. Համազասպեանց 1 ր. 30 կ. Ս. սարկ. Աբրահամեանց 1 ր. 5 կ. Ա. Տէր-Միքիթեանց 75 կ. Ա. Տէր-Մարտիրոսեան, Գ. Տէր-Սիմէօնեան, Ս. Մուրադեանց 50-ական կ.

Վարչապետից—բժշ. Հայրապետեանի մի-ջոցով 151 ր. 50 կ. որ նուիրել են՝

Չուրաբեան 50 ր. Բոստոմեան 25 ր. Մանուկեան 15 ր. Երեմիդեան, Վեքի-լեան, Լամբարեան, բժ. Հայրապետեան 10-ական ր. Կալամբարեան 5 ր. բժ. Կո-զերիկի 6 ր. բժ. Մալխումիկի 2 ր. բժ. Վատրաշերիկի, բժ. Հերար, բժ. Գեղորից, բժ. Վերնից, բժ. Շեստով, բժ. Ալա-պիւն, բժ. Կրիսիսիկի, բժ. Ասարկոնիկի 1-ական ր. բժ. Դուրբեկի 50 կ.:

Ալեքսանդրապոլից—Յ. Գիւլումանի մի-ջոցով 15 ր. որ նուիրել են՝

Ս. Սիմոնեանց 2 ր. Ա. Աղաժանեանց, Ս. Աբրահամեանց, Ս. Ասպետեանց, Բ. Իսա-հակեանց, Ս. Չանկոբեանց, Ճգնաւոր Սա-չօ, Յ. Բաղդարեանց, Գիւլումանեանց 1-ական ր. Կ. Ասիկեանց, Մ. Ամիկեանց, Հ. Մուրադեանց, Յ. Շլաժեանց. Հ. Պե-տրոսեանց, Գ. Ծաղիկեանց, Գ. Թաթևեանց, Ա. Արաքելեանց, Ա. Գիւլում-մեանց 50-ական կ. Օ. Մաշադեանց, Չ. Սիմեանց 25-ական կ.

Բաթումից—Ի. Ստեփանեանցից 70 ր. որը հանգանակած է Ա. Մանթաշեան Լնկ. զործարանի լէսօպիւնի բաժանմունքի աշ-խատաւորներէից նուիրատուներն են՝

Ի. Ստեփանեանց 2 ր. Ս. Ստեփանեանց, Ա. Կարապետեանց, Ա. Մարտիրոսեանց, Մ. Սախաթեան և Յ. Չէտեան 1 ր. 50-ական կ. Մ. Մարգարեանց, Գ. Մելիք-Շահնազարեանց, Բ. Կրուշեանց, Գ. Յով-հաննիսեանց, Ս. Աստուրեանց, Ն. Վի-տիեանց, Մ. Աղաբէգեանց, Բ. Կասպա-րեանց, Մ. Սարգիսեանց, Հ. Գասպարեանց, Ս. Ասաբեանց, Յ. Աբրահամեանց, Գ. Հայ-րապետեանց, Ռ. Մանուշարեանց, Ա. Մար-տիրոսեանց, Գ. Գափրիէլեանց, Տ. Լազի-եանց, Պ. Աբրահամեանց, Պ. Լազիեանց, Յ. Հայրապետեանց, Յ. Բալայանց, Ա. Սարգիսեանց, Ս. Լաւրամեանց, Է. Մար-տիրոսեանց, Պ. Պետրոսեանց, Մ. Վար-դանեանց, Յ. Մարտիրոսեանց, Ն. Օհա-նեանց, Ա. Ալիբաբեանց, Ս. Լազարեանց, Ս. Բաղդասարեանց, Ա. Արաքելեանց, Ա. Ավանդեանց, Գ. Մարտիրոսեանց, Ա. Լա-զարեանց, Եփ. Սաչատրեանց, Գ. Յով-հաննիսեանց, Բ. Աղիբեանց, Պ. Մելքոնեանց, Բ. Կարապետեանց, Ս. Արուշեանց, Ա. Ավանդեանց, Հ. Բուզադեանց, Ս. Ավե-տիսեանց, Ե. Պողոսեանց, Մ. Թաթևեանց, Ս. Սարգիսեանց, Մ. Դաւթեանց, 1-ա-կան ր. Հ. Ավաբեան, Լ. Կարապետեան, Գ. Օհանեան, Յ. Դաւթեան, Ն. Օհանեան, Բ. Լաւրեան, Ի. Լալայեան, Ս. Յակով-բեան, Յ. Յակովբեան Ս. Սարգիսեան, Գ. Երկարեան, Վ. Արզումանեան, Հ. Յա-րութիւնեան Գ. Գասպարեան, Հ. Վար-դանեան, Ա. Ամիրջան, Ս. Յակովբեան, Լ. Էդրոբեան, Օ. Վարդանեան, Ռ. Գա-սպարեան, Ա. Գասպարեան, Յ. Մուսաէ-լեան, Հ. Դուրբեանեան, Գ. Բեկլարեան և Գ. Բոչարեան 50-ական կ.:

Կ. Մարկոսեանի հաւաքած 20 ր. 30 կ. Թիֆլիզում բնակվող Արաքելայի կառա-ւորներէից, որ նուիրել են՝

Կ. Բուլթաթեան 1 ր. 50 կ. 2. Դով-լանեան, Տ. Բարսեղեան, Վ. Մամիբեան, Պ. Պետրոսեան, Յ. Յակոբեան, Մ. Թու-մանեան, Կ. Համբարեան, Ա. Բուլթաթեան, Ս. Լազարեան 1-ական ր. Ոմ. Կ. Կա-րիսեան, Կ. Սաֆարեան, Ս. Չուրիսեանց, Լ. Յովհաննիսեան, Գ. Եղուշեանց, Օ. Հետարեան, Հաշի Գ. Լազարեան, Յ. Բաղիւ, Մ. Չալիաշեան, Ե. Յակոբեան, Վ. Հայրապետեան, Փ. Հայրապետեան, Ա. Եղուշեան, Ս. Գրիգորեան 50-ական կ.:

Յ. Արզումանեան 40 կ. Գ. Չաքարեան 30 կ. և Ռմ. 20 կ.:

Մի խումբ մարդկանցից (Թիֆլիսում) 15 ր. 50 կ. որ նուիրել են՝ Ա. Յովսէփեանց, Ե. Յովսէփեանց 3-ական ր. Ե. Մանգակեանց, Լալէշեանց, Բ. Պողոսեանց, Պ. Մարգարեանց, Ե. Շաի-նեանց 1-ական ր. Ս. Անանեանց, Կ. Բալ-լամեանց, Ե. Յովսէփեանց 50-ական կ. Գ. Միքայիլովի 1 ր. Ե. Սուրբովի 1 ր. Ե. Տէր-Պողոսով, Ե. Վարդանով, Սարգիս 50-ական կ.:

Բաղշինեանի միջոցով 10 ր. (Թիֆլիսում) Ա. Միլիտարեան, Մ. Բախշինեանց 1 ր. 50-ական կ. Հ. Սրապիճեանց, Կ. Կարապետեանց, Ս. Չալիեանց, Ռ. Սիրու-նեանց, Ս. Քանանեանց 1-ական ր. Ս. Անիստեան, Ս. Սիլիւստրեանց, Հ. Առա-քելեանց, Չաքարեանց 50-ական կ.:

Դաղէթ—գիւղից Գ. Մեսեանի միջոցով 28 ր.:

Ալալիսից Աղամ Մակարեանի միջո-ցով 220 ր. 60 կ.:

Թողու գիւղից 3 ր. Բ. Կարապետեանի միջոցով, որ նուիրել են՝

Տիկին Կարապետեանց, Ս. Գիւրգա-րեանց, Բ. Կարապետեանց 1-ական ր.:

Ղարաուս քաղաքից—Տիգրանի Ուլ. Աս-րեանի միջոցով հանգանակած 150 ր., որ նուիրել են՝

Գարեգին քահանայ Ասրեան 3 ր. Յ. Պէնիկեան 15 ր. տիկ. Ն. Դուլիէլով, Յ. Սիւրեան, Կ. Ալիսեան, Գ. Ալիսեան-ճեան, 10-ական ր. օրիորդ Գ. Եղեմեան տիկին Աննա Չիւրիւբեան, Ս. Եղեմեան Գ. Եղեմեան, Մ. Քեչիկեան, Ռ. Եղ-ճեան, 5-ական ր. տիկ. Գ. Դեղբեմէնճեան տիկ. Ա. Տեմեռեան, Յ. Փափուճեան, Յ. Քեչիկեան, Գ. Միքիթարեան, Ե. Կան-գարակի, Գ. Պողոսեան, Լ. Բէկլիկեան, Կ. Պարոնեան, Ա. Ալիսեան, Գ. Փա-պուճեան Ա. Պարոնեան, Ա. Փապուճեան 3-ական ր. օր. Բ. Եղեմեան, տիկ. Մ. Պէնիկեան, Յ. Սանգատեան, Մ. Քե-չիկեան, Յ. Մուրադեան, Գ. Եղեմեան 2-ական ր. տիկ. Աննա Շերոնեան, Գ. Եղեմեան 1 ր. 50-ական կողմէ: Օրիորդ Ե. Եղեմեան, օրիորդ Վառ. Չառիկեան, Մ. Թումանեան, Գ. Պալաբեան, Յ. Դե-ղբեմէնճեան, Ս. Ալիսեան, Ա. Սա-րեան, Մ. Բարդիւս 1-ական ր.:

Մալիկ—քաղաքի հայ հասարակութիւ-նից օր. Չաքէլ Բերեբեանի միջոցով 450 ր. որից 50 ր. Երեւանի զոհերի օգտին նուիրատուներն են՝

Ընամիք Բերեբեան 20-ական ր. Ա. Սորաթեան 15 ր. Հ. Թերզիկեան 5 ր. Ս. Չիլիկեան 25 ր. Ս. Ռէիկեան 5 ր. Բ. Սորաթեան, 25 ր. Ա. Շապուղեան Յ. Շապուղեան 10-ական ր. Վ. քահ. Անշարեան 5 ր. 2. Տէր-Եղիազարեան, Ս. Օհանեան 3-ական ր. Ս. Կարապետեան 15-ական ր. Յ. Մանգակեան, Յ. Աւե-տիսեան, Ա. Աւետիսեան, 10-ական րու. Ս. Տէր-Պողոսեան 15 ր. Մ. Յարութիւնեան 1 ր. Յ. Բաղարուկեան 25 ր. Բ. Դեղբեան 5 ր. Գ. Շապուղեան Հ. Թումանեան 2 ր. Կ. Թերզիկեան 25 ր. Վ. Սալիկեան 15 ր. Յ. Թերզիկեան 20 ր. Էջանօմօղլու տիկին Թ 5 ր. Եղ. Սրտի-շեանք Վարդանեան 3-ական ր. Սուրբեան և Օհանեան 10 ր. Կ. Յիդիբեան Ն. Տէր-Պետրոսեան 3-ական ր. Մ. Կուրճեան 50 ր. Ս. Սիմէօնեան 3 ր. Մ. Անդրէասեան 10 ր. Ռ. Փառսեան, Ե. Յակոբեան 1-ական ր. Ա. Յովսէփեան 3 ր. Ե. Մանգակա-նեան 15 ր. Ն. Սարբոշեան 2 ր. Մ. Ա-բովեան 1 ր. 50 կ. Ա. Ամերխանեան Եղ. Օնիքեանք 2-ական ր. Յ. Բիդիկեան 1 ր. Պ. Տէր-Պետրոսեան 5 ր. Պ. Սուրբեան 3 ր. Բապուղով 50 կ. Ս. Տէր-Կարապե-տեան 2 ր. Ա. Աւետիսեան 3 ր. Ն. Շեհ-րիկեան 1 ր. Մ. Մելիքեանց 50 կ. Ա. . . . 1 ր. Ե. Շապուղեան 5 ր. Բա-ղարուկեանի վաճառատան ծառայողներէից 16 ր. Ս. Սրամբէշեան 2 ր. Գ. Տէր-Օ-հանեան 3 ր. Մ. Մանգակեան 25 ր. Ս. Իսաբեան 5 ր. Մովսէս 3 ր. Ա. Ն. 2 ր. 50 կ. Գ. Մամար 450 ր.:

Թիֆլիսից—Եգիպտի քն. Ալիսեանի ձեռքով հանգանակած 20 ր., որ նուիրել են հետեւեալ անձնիք:

Եգիպտի քահանայ Ալիսեանց 2 ր. Ա. Սանարխանեանց 2 ր. Բ. Էնակովեանց Գ. Յարութիւնեանց, Մ. Բալայի օղլի Պ. Նիկողոսեանց, Ս. Յարութիւնեանց, Ա. Սանարխանեանց 1-ական ր. Ա. Մելի-քեանց, Ա. Բօլիկեանց, Յ. Սրաբեանց, Ա. Միքայիլեանց, Յ. Բաղդասարեանց, Բ. Մուրադեանց, Ա. Վարդապետեան, Վառվառ Սարեանց, Ս. Մամեանց, Ա. Սափարեան, 50-ական կ. Յ. Սրաբեանց, Ս. Յովհան-նիսեանց 30-ական կ. Թ. Բէկազով, Վ. Բուլթաթիկի, Ա. Թումանեանց, Տ. Սարգ-սեանց, Ս. Օհանեանց, Ս. Թումանեանց, Ս. Բերուլարիճէ, Գ. Յարութիւնեանց, Ա. Մուրադեանց, Կ. Վարդանեանց, Ե. Հա-լիմամուդեանց, Մ. Գալստեանց, Է. Օ-րադիլիզիլի, Կ. Ալիսեանց, Ա. Գոշա-րեանց, Բ. Բառիկեանց, Ս. Լիսաեանց, Ն. Արաբեանց, օտարական, Յ. Արաբեանց, Ս. Գոզարեանց, Ս. Էլիզբարով 20-ական կ. Կախ-Ասանի—հայ հասարակութիւնից, Յովհանթեանեանի և Ստեփանեանի միջո-ցով 23 ր. 70 կ., որ նուիրել են՝

Յ. Յովսէփեանց, Կ. Ստեփանեանց, Հ. Միլիտարեանց, Ս. Միլիտարեանց, Մ. Մուրադեանց, Տէր-Հայրապետեանց, Հ. Ե-սայեանց, Մ. Թորոսեանց, Ս. Անդրիեա-նեանց, Ս. Տէր-Յովհաննիսեանց, Եղ. Օ-

հանջանեանցներ, Հ. Մարտիրոսեանց, Հ. Օհանջանեանց, Յ. Մարտիրոսեանց, Յ. Մահաբի Օհանեանց, Ս. Դաստակեանց, Ս. Էլիբէկեանց, 1-ական ր., Ա. Բեժա-նեանց 65 կ. Մ. Գիւրգադարեանց, Հ. Վա-նեանց, Յ. Մամախանեանց, Մ. Մկրտու-նեանց, Կ. Դեբեբեանց, Ս. Նազարեան, Ս. Դրեղորեանց, Ա. Յովսէփեանց, Կ. Դա-րիբաշեանց, Մ. Վանեանց, Ս. Եսայեանց 50-ական կ. Մ. Օհանեանց 35 կ. Յ. Մա-մախանեան 20 կ.:

Դաւիթից—Անանեան Ա.ի միջոցով հոգեհանգստին հանգանակած 47 ր. 10 կ., որ նուիրել են՝

Կիկնադէ 3 ր. Կ. Անանեանց, Ա. Սի-րականեանց, տիկ. Տէր-Լազարեանց, Ն. Դաւիթեան 1-ական ր. Վ. Կոպուղէ 1 ր. 60 կ. Ն. Մանուկեանց, Կատ. Միրզոյ-եանց, Վար. Նիմանդէ 1-ական ր. Լ. Գո-զարեանց 60 կ. Լ. Դեղբուրաբեան, 50 կ. Եւա Սիդանով 35 կ. Լ. Սուրբեանց, 40 կ. Լ. Եարով 30 կ. Ե. Միքիթարեանց, 50 կ. Գ. Գոզարեանց, 50 կ. Ս. Սաղաթեանց 30 կ. Եւա Միրականեանց, 20 կ. Հ. Տ. 15 կ. Ս. Տէր-Միքիթեանց 3 ր. Ս. Սի-րականեանց 3 ր. Դ. քահ. Ամիրջանեան, 2. Ա. Անանեանց 2. Ս. Միքիթարեան 1 ր. Վ. Դիդ-Չուրաբով 2 ր. Ս. Տէր-Լազա-րեանց 2 ր. Վ. Մանուկեանց 2 ր. Գ. Միրզոյեանց, Վ. Միքիթարազիլի, Ն. Մա-ցականեանց, Մ. Ամիրքեանց 1-ական ր. Տ. Սուրբեանց, Ա. Յակոբեանց, Պ. Կո-բարիզէ, Գ. Մանուկեանց, Մ. Սիրա-կանեանց, Ա. Սաղաթեանց, Ա. Եարով, Ն. Գոզարեանց, Մ. Միքիթարեանց, Վ. Ի-գիթով, Յ. Մանուկեանց, Յ. Սարգսեան, 50-ական կ. Թեոք, Լ. Նարիմանով 30-ական կ. Սամադ Բոչատ օղլի 40 կ. Վ. Կալատոգով 30 կ. Դաւաթաշիլի 30 կոպ. Յարութիւնեանց 20 կ. Իշխ. Իվան Կիւ-զեբեկի 20 կ. Բ. Յարութիւնեանց, Ա. Սէ-չեանց 25-ական կ. Գ. Թորոսեանց 10 կ. Վ. Օրիկուորի, մի Ռմ. 20-ական կ. Մա-մադ Աբով Իբրահիմ օղլի 30 կ.:

Գարեան Աստուածատուրեանի միջոցով 5 ր., որ նուիրել են՝

Կ. Կարապետեանի արհեստանոցից 3 ր. 40 կ. Կ. Թանդիլեանց, Է. Կոստանեան, Ե. Ամիրադեան 30-ական կ. Ա. Չամա-րեանց 10 կ. Ս. Թորոսեան 40 կ. Ա. Մալ-խաթեան 20 կ.:

Դերասանուհի Մելիքեանի հաւաքած 5 ր. 25 կ. նուիրել են՝

Տէր-Սաչատրեանի 3 ր. տ. Օվիկեան, տ. Փաւստեան 1 ր. փոքրիկ Հեղուշից և Մարգուշից 25 կողմէ:

Լալայիցից, հայ ուսանողներից Հ. Մու-սայիկեանի միջոցով տաս մարի:

Յարսի-Կալոյից Ռ. Մարութեանից 2 ր. Դանճակից: Մ. Դարչինեանից 3 ր.:

Շիւսի ճորի հայ հասարակութիւնից հոգեհանգստի ժամանակ հանգանակած 7 ր.:

Թիֆլիսի, Չիքրաշէնի ծխական երկսեռ զարոյցների աշակերտ-աշակերտուհիներից և ուսուցչական խմբից 29 ր. 46 կ.:

Թիֆլիս, Ռմ. 3 ր.:

Սաւաղապոլից, Լ. Մելքոնեանի միջոցով, հոգեհանգստի ժամ. հանգանակած 30 ր.:

Բալանտից, Սամա. Լալիքիանից 25 ր.:

Ալեքսանդրապոլից՝ Ա. Ամիրեանից 10 ր. Լազանուկից Կար. Սաչումեանից 3 ր. Սուլայի գիւղի (Ախալքալաքի գաւառ)

հայ հասարակութիւնից Յերմանեանի մի-ջոցով 21 ր., որից մէկ րուբլի Տ. Սեւա-նովեանից:

«Կորբուր» գործակաւորներից 33 ր. որ նուիրել են Հ. Աւաբեան, Ա. Աղայեան 10-ական ր., Պ. Աղայեան 5 ր. բանւոր-ներէից—Յ. Ավելիսեան 3 ր. Ա. Յարութիւնեան, Յ. Աղայեան 2-ական ր., Գ. Սարգիսեան 1 ր.:

Տէր-Աստուածատուրեանից ր բարեկամ հանգ. Բոզարշեանցի դաճաղին պսակի փոխարէն յատկացրած 50 ր.:

Տ. Գուցումեանից (Թիֆլիսում) 10 ր. Մելիքովեանից 25 ր. Իլիշատակիւրանց Պօրա-Արամուրով սպանւած որդից-Նի-կողայոսի և Վաղիմիւրի յիշատակին:

Ղարսից. Ս. Գ. Թումանեանցից 10 ր.:

Յ. Սուգանաճեանից (Թիֆլիսում) 25 ր. «Գոտանիւք» իրախանութից 3 ր.:

Ա. Սահակեանից (Թիֆլիսում) 3 ր.:

(Կը շարունակվի)